ԹԵՄԱ 1 ԵՎՐՈՊԱ

ԴԱՍ 1.15. Ֆրանսիայի Հանրապետություն: Աշխարհագրական դիրքը, բնական պայմաններն ու ռեսուրսները, բնակչությունը

• • •

Ֆրանսիայի բնական պայմաններն ու ռեսուրսները բարենպաստ են մարդու կյանքի և տնտեսական գործունեության համար: Հարմար ՏԱԴ–ը, համեմատաբար հարթ մակերևույթը, բարենպաստ հողակլիմայական պայմանները լավագույն նախադրյալներ են գյուղատնտեսության զարգացման համար: Բազմատեսակ են *հանքային ռեսուրսները*. **Լոթարինգիան** հայտնի է երկաթի հանքաքարով, **Էլզասը՝** ածխով, կալիումական աղով, **Ռոնի** ավազանը՝ ալյումինի հումքով՝ բոքսիտներով: Ֆրանսիան ապահովված է ուրանի (Կենտրոնական զանգված) պաշարներով:

Անցյալում ընդարձակ տարածք են զբաղեցրել *լայնատերև անտառները* (**Պրովանս**, **Լանգեդոկ**): Մարդու տնտեսական գործունեության հետևանքով դրանց մեծ մասը հատվել են և վերածվել վարելահողերի ու բազմամյա տնկարկների՝ այգիների: Ներկայումս անտառածածկ է տարածքի 20%–ը:

• • •

Նշանակված են միանվագ և մինչև 16 տարեկան դառնալը երեխային հատկացվող նպաստներ, երկարացված է հղիության արձակուրդը, մայրերին տրվում են տարբեր արտոնություններ:

Բնակչության մեջ բարձր է տարեցների տեսակարար կշիռը՝ 24% և ցածր երեխաներինը՝ 11%: Հիշեք, որ Քենիայում այն կազմում է համապատասխանաբար՝ 4 և 52%: Բարձր է բնակչության կրթական մակարդակը, աշխատանքային ռեսուրսների որակը, բնակչության զբաղվածության աստիճանը: Բարձր կենսամակարդակի շնորհիվ բարձր է նաև կյանքի սպասվելիք միջին տևողությունը՝ 81–82 տարի (հիշեք, Սոմալիում այն 38–40 տարի է):

• • •

2006–2007 թվականները Ֆրանսիայում հռչակվեց Հայաստանի տարի՝ «Հայաստանն իմ բարեկամն է» կարգախոսով: Տարբեր տարիների Հայաստան են այցելել Ֆրանսիայի նախագահներ Ժակ Շիրակը, Ֆրանսուա Օլանդը, Էմանուել Մակրոնը:

XV–XVI դարերում հայկական գաղութներ են հիմնվել **Մարսելում**, **Փարիզում**, **Լիոնում**, **Բուրժում**: Հայերի հոսքը մեծացավ հատկապես Մեծ եղեռնից հետո: Անմոռանալի է ֆրանսիական ժողովրդի և ֆրանսահայության մարդասիրական օգնությունը Սպիտակի երկրաշարժից տուժած Հայաստանին: Ֆրանսահայ գաղութը սփյուռքի մշակութային խոշոր կենտրոններից է, որտեղ գործում են կրթական, մշակութային հաստատություններ, լույս են տեսնում թերթեր, ամսագրեր, գրքեր: Լայն ճանաչում ունեն աշխարհահռչակ երգիչ Շառլ Ազնավուրը, նկարիչ Գառզուն՝ Գառնիկ Զուլումյանը, ռեժիսոր Անրի Վերնոյը՝ Աշոտ Մալաքյանը, Անրի Թրուայան, աշխարհում առաջին արհեստական ադամանդի՝ ջևա (ազգանվան սկզբնատառերով) ստեղծող Հրանտ Ջևահիրջյանը և շատ ուրիշներ:

• • •

Ֆրանսիայի ներկայիս տարածքը ձևավորվել է XV դարի վերջում՝ ավատատիրական (ֆեոդալական) բազմաթիվ տիրապետությունների միավորման և թագավորական կենտրոնացված պետության ստեղծման շնորհիվ: Իր ուրվագծով այն հիշեցնում է վեցանկյուն բազմանկյուն: Ֆրանսիան Եվրոպայից դուրս ունի *անդրծովյան դեպարտամենտներ*՝ **Գվադելուպան**, **Մարտինիկան**, **Գվիանան**, **Ռեյունյոնը** և *անդրծովյան տարածքներ*, որոնցից խոշորագույնն են **Նոր Կալեդոնիան** և **ֆրանսիական Պոլինեզիան**:

• • •

Ժամանակակից Ֆրանսիայի բնակչության ազգային կազմը *համեմատաբար միատարր է*, բնակչության 93%-ը կազմում են ֆրանսիացիները: Ապրում են նաև **էլզասցիներ**, **բրետոնցիներ**, **կորսիկացիներ**, որոնք բոլորն էլ տեղաբնիկներ են: XX դարի 20–30-ական թվականներին Ֆրանսիան դարձավ զանգվածային ներգաղթի երկիր: Նրանց մեջ շատ էին իտալացիները, լեհերը, իսպանացիները, պորտուգալացիները, հայերը: Վերջին տասնամյակներին ներգաղթյալների մեջ գերակշռում են Հյուսիսային Աֆրիկայից եկած արաբները: Ալժիրը ժամանակին ֆրանսիական գաղութ էր, ուստի պատահական չէ ալժիրցի արաբների մեծ թիվը Ֆրանսիայում:

Ֆրանսիայի բնակչությունը դանդաղ է աճում (տարեկան՝ 0,3%), պե-

տությունը վարում է ծնելիությունը խրախուսող *ժողովրդագրական քաղաքականություն*:

• • •

Ալպերը (բարձր գագաթը՝ **Մոնբլան** Սպիտակ լեռը՝ 4807 մ) ունի հանգստի ու զբոսաշրջության մեծ ներուժ լեռնագնացների և լեռնադահուկային սպորտի սիրահարների համար: Նրանից սկիզբ առնող գետերն էլ (**Ռոն՝ Սոն** վտակով) ունեն ջրաէներգետիկական մեծ նշանակություն:

Կան երկրներ ու ազգեր, որոնց անունը զուգորդվում է գեղեցիկի ու առաջավորի հետ: Այդպիսիներից են Ֆրանսիան և ֆրանսիացիները: Ֆրանսիական ազգը ձևավորվել է տեղաբնիկ կելտական ցեղերի՝ գալլերի և ֆրանկ կոչվող արևմտագերմանական եկվոր ցեղերի շփման ու ձուլման արդյունքում:

• • •

Փարիզում տեղակայված են մոտ 200 քաղաքական, տնտեսական, հասարակական միջազգային շատ հայտնի կազմակերպություններ: Առավել նշանավոր են **ՅՈՒՆԵՍԿՕ**-ն և **ԻՆՏԵՐՊՈԼ**-ը, Համալսարանների միջազգային ասոցիացիան, Առևտրի միջազգային պալատը, Միջազգային գիտական միությունների խորհուրդը: